DOI: 10.53548/0320-8117-2024.1-397

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2022, 546 էջ:


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(բուհական դասագիրք «Աշխարհագրություն» մասնագիտությամբ սովորողների համար)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Լույս է տեսել ԵՊՀ վաստակաշատ մանկավարժ և գիտնական Ակսել Պոտոսյանի «Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» բուհական դասագիրքը: Այստեղ Հայաստանի Հանրապետությունը ներկայացվում է սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունների և հիմնախնդիրների ողջ ներկապնակով:

Վիճակագրական հարուստ ու թարմ տվյալների, տեսական ու փաստական նյութի վերլուծմամբ և համադրմամբ հեղինակը տվել է ՀՀ տարածքի, սահմանների և աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները: Վեր է հանել բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժի հնարավորությունները: Ցույց է տվել բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխման և տարաբնակեցման բնորոշ գծերն ու աշխարհագրական առանձնահատկությունները, ներկայացրել է տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի առկա իրավիճակը, մեկնաբանել է արտաքին տնտեսական կապերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները: Հատկորոշել է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները և զարգացման հիմնախնդիրները:

Դասագիրքն ունի կուռ, տրամաբանված կառուցվածք, փոխկապակցված թեմաներով նյութի հաջորդական շարադրում՝ հագեցած բազմաթիվ աղյուսակային տվյալներով, դիագրամներով, նկարներով, գծապատկերներով և քարտեզներով:

Աշխատությունն ունի 6 բաժին, մի շարք ենթաբաժիններ, որոնցից յուրաքանչյուրում տրվում են ՀՀ-ին վերաբերող որոշակի սոցիալ-տնտեսաաշխարհագրական հարցերի վերլուծություն և գնահատում՝ դրանով իսկ նպաստելով մեր երկրի տնտեսության արդյունավետ ու ինտենսիվ զարգացմանը, տարածքների համաչափ յուրացման մեխանիզմների ճիշտ կիրառմանը:

Մեծ է այս աշխատության տեսական ու կիրառական նշանակությունը, լայն՝ այն օգտագործել ցանկացողների շրջանակը: Աշխարհագետներից և հարակից մասնագիտություններից բացի, այն կարող է նպաստել ու օգնել նաև կառավարման համակարգի տարբեր ենթակառուցվածքների ոլորտային խնդիրներով զբաղվող մասնագետներին՝ դառնալով ուղեցույց և տեղեկատու:

Աշխատության առաջին բաժնում, անդրադառնալով ՀՀ տարածքի, աշխարհագրական դիրքի, սահմանների, պետական կարգի և վարչատարածքային բա-

ժանման առանձնահատկություններին, հեղինակը, այսօրվա իրողություններին և ռազմաքաղաքական իրադարձություններին համահունչ, կարևորել է մեր երկրի քաղաքական-աշխարհագրական, տրանսպորտային և տնտեսաաշխարհագրական դիրքերի ներուժայնության հատկանիշները, հարևանային աշխարհագրական դիրքի աննպաստությունը, դեպի ծով անմիջական ելք չունենալը, տնտեսական հզոր կենտրոններից համեմատաբար հեռու գտնվելը, միաժամանակ նաև կարևոր ճանապարհային հանգույց և կապող ուղի լինելու հանգամանքը տարբեր ուժային և տնտեսական կենտրոնների միջև:

Դասագրքի երկրորդ բաժնում քննարկվում են ՀՀ աշխարհագրական միջավայրին և բնառեսուրսային ներուժին վերաբերող հարցեր: Տրվում են մակերևույթի բնույթը և տարածքի ռեսուրսային գնահատականը, կլիմայական պայմանների ու ռեսուրսների, ընդերքի, հողային, ջրային, կենսաբանական և ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական վերլուծություն և գնահատական: Առանձնակի կարևորվում են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների, բնօգտագործման և բնապահպանության խնդիրները, կենսաբազմազանությանը վերաբերող հարցերը:

Հատկանշական է աշխատանքի երրորդ բաժինը, որտեղ լուսաբանվում են ՀՀ բնակչությանն ու տարաբնակեցմանը և աշխատանքային ռեսուրսներին առնչվող հարցեր: Մասնավորապես կարևորվում են ՀՀ տարածքի բնակեցման գործոնները և պատմաաշխարհագրական նախադրյալները, տարաբնակեցման ձևավորումը, բնակչության թվի շարժընթացն ու վերարտադրությունը, կազմի, կառուցվածքի և տեղաբաշխման առանձնահատկությունները, քաղաքային և գյուղական տարաբնակեցման յուրահատկությունները, մայրաքաղաքի ուրույն դերակատարությունը:

Դասագրքի չորրորդ և հինգերորդ բաժիններում՝ ավելի քան 300 էջ շարադրանքի սահմաններում, մասնագիտական բարձր մակարդակով քննարկվել են ՀՀ տնտեսության և նրա տարածքային կառուցվածքի խնդիրները: Անդրադառնալով ՀՀ ժամանակակից տնտեսության ընդհանուր բնութագրին, նրա ձևավորման ու զարգացման պատմությանը՝ հեղինակն առանձնացրել է արդյունաբերության այն ճյուղերը, որոնք ավանդաբար առաջնային են մեր տնտեսության ընդհանուր պատկերի մեջ: Դրանք են մետաղաձուլությունը, վառելիքաէներգետիկ տնտեսությունը, մեքենաշինությունը, թեթև և սննդի, քիմիական և շինանյութերի արդյունաբերությունները: Քննարկվում են նաև Հայաստանի արդյունաբերության նորագույն ճյուղերը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, լազերային տեխնիկայի արտադրության և դրանց հետ փոխկապակցված ուղղությունների զարգացման հեռանկարները:

Համաշխարհային պարենային ճգնաժամի լույսի ներքո կարևորվում է ՀՀ գյուղատնտեսության դերը՝ բուսաբուծության և անասնապահության տեղական պայմանների ու հնարավորությունների լայն կիրառման դաշտն օգտագործելու առումով: Դասագրքում առանձնակի կարևորվել են նաև ՀՀ տրանսպորտային համակարգի տնտեսաաշխարհագրական վերլուծությունը, նրա առանձին տեսակնե-

րին և ոլորտում առկա հիմնախնդիրները: Պատշաճ մակարդակով ներկայացվել է նաև ՀՀ տնտեսության ոչ արտադրական ոլորտի և զբոսաշրջային ինդուստրիայի տնտեսաաշխարհագրական բնութագիրը: Վեր են հանվել այդ ոլորտի առանձին ճյուղերի տեղաբաշխման, զարգացման և տարածքային կազմակերպման առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները: Անդրադարձ է կատարվել ոչ արտադրական ոլորտի այնպիսի կարևոր բաղադրիչներին, ինչպիսիք են կրթությունը, գիտությունը, արվեստը, սպորտը, մշակույթը, առևտուրն ու սպասարկման դաշտը: Կարևորվել է զբոսաշրջային ինդուստրիայի դերը՝ հատկապես նոր ուղղությունների առումով, որը նպաստում է երկրի տնտեսության, նրա առանձին տարածաշրջանների զարգացման գործին:

Դասագրքի բովանդակությունն ավելի հարստացնում և ամբողջական է դարձնում ՀՀ տնտեսության տարածքային կառուցվածքին նվիրված բաժինը: Այստեղ հեղինակը նախ քննարկել է ՀՀ սոցիալ-տնտեսական շրջանցման հարցերը, այնուհետև ՀՀ մարզերի և Երևանի համալիր սոցիալ-տնտեսաաշխարհագրական վերլուծության միջոցով վերհանվել են նաև դրանցում առկա զարգացման հիմնախնդիրները: Այդ ամենն ամբողջական պատկերացում է տալիս մեր երկրի տնտեսական հնարավորությունների, զարգացման հեռանկարների և դրանց միտումների մասին:

Աշխատության ամփոփիչ բաժինը աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանման համակարգում Հայաստանի դերակատարության մասին է: Այս բաժնում նշվում են միջազգային ասպարեզում մեր երկրի տնտեսության առաջնային և գերակա ուղղությունները, ուրվագծվում այն հեռանկարային ոլորտները, որոնք կապահովեն մեծ առաջընթաց:

Թեև դասագիրքն ունի ուսումնական բնույթ, սակայն աչքի է ընկնում նաև գիտականության բարձր մակարդակով: Աշխատանքում օգտագործվել են հեղինակի վերջին շուրջ քսան տարիների գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, որոնք իրենց արտացոլումն են ստացել նրա մենագրություններում, մի քանի տասնյակ գիտական հոդվածներում և թեմատիկ քարտեզներում:

Ամփոփելով նյութը՝ կարող ենք եզրակացնել, որ Ա. Պոտոսյանի այս ծավալուն՝ 545-էջանոց աշխատանքն իր 50 անուն օգտագործած աղբյուրներով և վիճակագրական հարուստ տվյալներով գալիս է ամբողջական ու թարմ պատկերացում տալու Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսաաշխարհագրական իրավիճակի մասին, որն այսօր խիստ կարևոր է, օգտակար ու արդիական:

ԿԱՄՈ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Աշխարհագրական գիտությունների թեկնածու